

**Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային
համագործակցության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիայի
Լրացուցիչ արձանագրություն**

Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) Լրացուցիչ արձանագրությունը ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

հաստատելով սահմանամերձ շրջաններում տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության կարևորությունը,

վճռական լինելով լրացուցիչ միջոցներ ձեռնարկել՝ տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցությունն ապահովելու համար,

ցանկանալով զարգացնել և դյուրացնել սահմանամերձ շրջանների տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցությունը,

ընդունելով Շրջանակային կոնվենցիան Եվրոպական իրականությանը հարմարեցնելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով, որ նպատակահարմար է լրացումներ կատարել Շրջանակային կոնվենցիայում՝ տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցությունը ավելի ուժեղացնելու նպատակով,

հաշվի առնելով Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիան, նկատի ունենալով Եվրոպայում անդրսահմանային համագործակցության հռչակագիրը, որը նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է Եվրոպայի խորհրդի 40-րդ տարեդարձի կապակցությամբ, և որը, ի թիվս այլոց, խրախուսում է շարունակական գործողությունները՝ ուղղված անդրսահմանային ծրագրերի զարգացման ցանկացած (վարչական, իրավական, քաղաքական կամ հոգեբանական) արգելքները աստիճանաբար վերացնելուն,

համաձայնեցին հետևյալ լրացուցիչ պայմանների մասին.

Հոդված 1

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ճանաչի և հարգի Շրջանակային կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված և իր իրավագործության ներքո գտնվող տարածքային համայնքների կամ իշխանությունների իրավունքը՝ այլ պետությունների տարածքային համայնքների կամ իշխանությունների հետ կնքելու անդրսահմանային համագործակցության համաձայնագրեր՝ իրենց ընդհանուր իրավասության ոլորտներում, իրենց կանոնադրություններում սահմանված ընթացակարգերին և իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան և տվյալ Կողմի ստանձնած միջազգային պարտավորությունները հաշվի առնելով:

2. Անդրսահմանային համագործակցության համաձայնագիրը պարտավորեցնում է միայն դրանք կնքած տարածքային համայնքներին կամ իշխանություններին:

Հոդված 2

Անդրսահմանային համագործակցության համաձայնագրով համատեղ ընդունած որոշումները պետք է տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից կատարվեն իրենց ազգային իրավական համակարգի շրջանակներում և իրենց ազգային օրենսդրության համաձայն: Կատարված որոշումները, այսպիսով, պետք է

օժտված լինեն նույն իրավական ուժով և հետևանքներով, որոնցով օժտված են այդ համայնքների կամ իշխանությունների կողմից իրենց ազգային իրավական համակարգի համաձայն իրականացվող միջոցառումները:

Հոդված 3

Տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից կնքված անդրսահմանային համագործակցության համաձայնագրով կարող է ստեղծվել անդրսահմանային համագործակցության մարմին, որը կարող է ունենալ կամ չունենալ իրավաբանական անձի կարգավիճակ: Համաձայնագիրը կնախատեսի, թե մարմինը, իր տրված լիազորությունների և ազգային իրավական համակարգի պայմանների համաձայն, արդյո՞ք կդիտվի հանրային կամ մասնավոր իրավունքի սուբյեկտ այն ազգային իրավական համակարգերի սահմաններում, որոնց պատկանում են համաձայնագիրը կնքող տարածքային համայնքները կամ իշխանությունները:

Հոդված 4

1. Այն դեպքում, երբ անդրսահմանային համագործակցության մարմինը ունի իրավաբանական անձի կարգավիճակ, այդպիսի կարգավիճակը սահմանվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է նրա նստավայրը: Մյուս Պայմանավորվող կողմերը, որոնք ունեն անդրսահմանային համաձայնագրի Կողմ հանդիսացող տարածքային համայնքներ կամ իշխանություններ, ճանաչում են մարմնի իրավաբանական անձի կարգավիճակը իրենց ազգային օրենսդրության համաձայն:

2. Անդրսահմանային համագործակցության մարմինն իրականացնում է տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից իր նպատակին համապատասխան իրեն տրված լիազորությունները տվյալ մարմնի գործունեությունը կարգավորող ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսպիսով՝

ա) անդրսահմանային համագործակցության մարմնի գործողությունները կարգավորվում են իր կանոնադրությամբ և նստավայր երկրի օրենսդրությամբ,

բ) անդրսահմանային համագործակցության մարմինը, այնուամենայնիվ, իրավասու չէ կատարելու այնպիսի միջոցառումներ, որոնք ենթակա են ընդհանուր կիրառման կամ կարող են ազդել անհատների իրավունքների և ազատությունների վրա,

գ) անդրսահմանային համագործակցության մարմինը ֆինանսավորվում է տարածքային համայնքների կամ իշխանությունների բյուջեներից: Այն իրավասու չէ սահմանելու հարկային բնույթի վճարներ: Անհրաժեշտության դեպքում այն կարող է եկամուտներ ստանալ տարածքային համայնքներին կամ իշխանություններին, սպառողներին կամ երրորդ անձանց ծառայություններ մատուցելու դիմաց,

դ) անդրսահմանային համագործակցության մարմինը ունի ամենամյա հաստատված բյուջե և կազմում է հաշվեկշռային հաշիվ, որը հաստատվում է համաձայնագրի Կողմ հանդիսացող տարածքային համայնքներից կամ իշխանություններից անկախ աուդիտորների կողմից:

Հոդված 5

1. Պայմանավորվող կողմերը կարող են, եթե նրանց ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս, որոշել, որ անդրսահմանային համագործակցության մարմինը հանդիսանա հանրային իրավունքի սուբյեկտ, և Պայմանավորվող կողմերի իրավական համակարգում նրա կողմից իրականացվող յուրաքանչյուր գործողություն օժտված լինի նույն իրավական ուժով և հետևանքներով, որոնցով այն օժտված կլիներ, եթե կատարված լիներ համաձայնագիրը կնքած տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից:

2. Անուամենայնիվ, համաձայնագիրը կարող է նախատեսել, որ դա վերաբերում է միայն տարածքային համայնքներին և իշխանություններին, որոնք համաձայնագիրը կնքել են այդպիսի միջոցառումներ իրականացնելու համար՝ հատկապես, երբ միջոցառումները կարող են ազդել անհատների իրավունքներին, ազատություններին և շահերին: Բացի այդ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է նախատեսել, որ ընդհանուր լիազորությունները չեն կարող վերապահվել անդրսահմանային համագործակցության մարմնին, և որ այդ մարմինը չպետք է իրավասու լինի իրականացնելու ընդհանուր կիրառման ենթակա միջոցառումներ:

Հոդված 6

1. Տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից անդրսահմանային համագործակցության համաձայնագրի հիման վրա իրականացվող միջոցառումները ենթակա են նույն վերահսկողությանը, ինչպիսին նախատեսում է յուրաքանչյուր Կողմի օրենսդրությունը՝ համաձայնագիրը կնքած տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից իրականացվող միջոցառումների առումով:

2. Համաձայնագրի հիման վրա ստեղծված անդրսահմանային համագործակցության մարմնի իրականացրած միջոցառումները ենթակա են վերահսկողության մարմնի նստավայր պետության օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով նաև այլ պետությունների տարածքային համայնքների կամ իշխանությունների շահերը: Անդրսահմանային համագործակցության մարմինը կատարում է այն պետությունների իշխանությունների տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումները, որին պատկանում են տարածքային համայնքները կամ իշխանությունները: Պայմանավորվող կողմերի վերահսկիչ մարմինները կփորձեն հաստատել համակարգման և տեղեկատվության փոխանակման համապատասխան միջոցներ:

3. 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված մարմնի իրականացրած միջոցառումները ենթակա են նույն վերահսկողությանը, ինչպիսին յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրությունը նախատեսում է համաձայնագիրը կնքած տարածքային համայնքների կամ իշխանությունների կողմից իրականացվող միջոցառումների առումով:

Հոդված 7

Անդրսահմանային համագործակցության մարմնի գործունեությունից ծագած վեճերը պետք է հանձնվեն ներպետական օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրով իրավասու դատարաններին:

Հոդված 8

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է սույն Արձանագրության ստորագրման կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը ի պահ տալու ժամանակ հայտարարի, որ կկիրառվեն 4-րդ և 5-րդ հոդվածների կամ սրանցից որևէ մեկի դրույթները:

2. Այսպիսի հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ փոփոխման ենթարկվել:

Հոդված 9

Արձանագրության դրույթների վերաբերյալ չի թույլատրվում վերապահումներ կատարել:

Հոդված 10

1. Սույն Արձանագրությունը բաց է Շրջանակային կոնվենցիան ստորագրած պետությունների ստորագրման համար, որոնք կարող են Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը արտահայտել հետևյալ կերպով.

ա) ստորագրմամբ՝ առանց ընդունման, վավերացման կամ հաստատման պայմանի, կամ

բ) ստորագրմամբ՝ հետագայում վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու պայմանով:

2. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող ստորագրել սույն Արձանագրությունը առանց վավերացման, ընդունման, հաստատման պայմանի կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու, եթե այն արդեն ի պահ չի հանձնվել կամ միաժամանակ ի պահ չի հանձնում Շրջանակային կոնվենցիայի՝ վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը:

3. Վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը պետք է ի պահ հանձնվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 11

1. Արձանագրությունը ուժի մեջ կմտնի Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին Եվրոպայի խորհրդի անդամ չորս պետությունների՝ 10-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ համաձայնությունը հայտնելուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

2. Այն անդամ պետությունների համար, որոնք հետագայում համաձայնություն կհայտնեն Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին, այն ուժի մեջ կմտնի ստորագրման կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ հանձնելուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

Հոդված 12

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո Շրջանակային կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետություն կարող է միանալ նաև Արձանագրությանը:

2. Ցանկացած միացած պետության համար սույն Արձանագրությունը ուժի մեջ կմտնի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

Հոդված 13

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Այդպիսի չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի այդպիսի ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալուց սկսած՝ վեց ամիսը լրանալուց հետո:

Հոդված 14

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին և յուրաքանչյուր պետության, որը միացել է սույն Արձանագրությանը՝

- ա) 8-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերի կատարած յուրաքանչյուր հայտարարության մասին,
- բ) յուրաքանչյուր ստորագրման մասին,
- գ) վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ տալու մասին,
- դ) 11-րդ ու 12-րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ժամկետի մասին,
- ե) սույն Արձանագրությանը վերաբերող յուրաքանչյուր այլ միջոցառման, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1995 թվականի նոյեմբերի 9-ին, մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության և յուրաքանչյուր այլ պետության, որը հրավիրվել է՝ միանալու սույն Արձանագրությանը:

***Համաձայն Լրացուցիչ արձանագրության 8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ նա կկիրառի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները:**

****Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 1-ից:**